Լոռու մարզպետ Անդրեյ Ղուկասյանին

<<Ֆորտունա >>Լոռու մարզային հեռուստաընկերության <<Թղթապանակ >> հաղորդման ,պրոդյուսեր ,հեղինակ՝Անահիտ Կարապետյանից :

Խնդրում եմ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում տրամադրել տեղեկատվություն հետեւյալ թեմաների մասին .

1 <<Թղթապանակ>> հաղորդմանը դիմել են քաղաքացիներ ,Լոռու մարզպետարանի կողմից հայտարարված թափուր հաստիքների համար ներդրումային բաժնում :Ստացել ենք բողոքներ այն մասին ,որ բազմաթիվ մարդիկ են դիմել մրցույթին ,սակայն մի մասին ասվել է ,որ ոչ ոք չի անցել ,մեկ այլ քաղաքացու նույնիսկ աշխատասենյակի տեղն է ասվել ,սակայն պայմանագիրը մարզպետարանը մեկ այլ անձանց հետ է կնքել .

Ինչպե՞ս է կայացել մրցույթը.ե՞րբ , ի՞նչ սկզբուքներով,չափորոշիչներով եւ ինչպե՞ս կմեկնաբանեք այն ,որ առավելությունը տրվել է մինչ այդ մարզպետարանի պայմանագրային աշխատակցին :

2 . 2018 ի հոկտեմբերի 19 -ին Լոռու մարզպետարանը կնքել է աշխատանքային պայմանագիր Լեոն Տեր Սիմոնյանի հետ ,իսկ 2019 ի Հունիսի 24- ին լուծարել պայմանագիրը: Ըստ մամուլի եւ վերջինիս հավաստման՝Լոռու մարզպետի խորհրդականը՝Լեւոն Տեր-Սիմոնյանը պաշտոնավարել է առանց համապատասխան փաստաթղթերի եւ ազատվել է աշխատանքից : Որքա՞ն էր կազմում Տեր Սիոմոնյանի ամսական աշխատավարձը եւ արդյո՞ք պետությանը հասցրած 8 ամսվա վնասը հատուցվել է :